https://doi.org/10.46991/hc.2022.17.1.065

Էդուարդ Զոհրաբյան
պ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՎ ԹՐՔԱԽՈՍՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հիմնաբառեր. Ատրպատական, թյուրքական ցեղեր, Հարավային Ադրբեջան, էթնիկ խմբեր, ազգային ինքնություն, ինքնագիտակցություն, ազգայնական գաղափարներ, հայրենիք, ցեղային պատկանելություն, թուրք-ազերի։

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումներում էթնիկ ինքնության խնդիրները նշանակալից տեղ են զբաղեցնում ինչպես միջէթնիկ, այնպես էլ միջպետական, ռազմաքաղաքական հարաբերությունների ձևավորման առումներով։ Մասնավորապես բազմէթնիկ նկարագրություն ունեցող տարածաշրջաններում էթնիկ ինքնության հիմնախնդիրն ունի առաջնահերթ նշանակություն՝ հաճախ վերածվելով հակամարտությունների ու բախումների առիթի։ Դրանց շարքում իր առանձնահատուկ դերն ունի իրանական թրքախոսների էթնիկ ինքնության և նույնականացման գործոնը։ Այն արդեն մեկ հարյուրամյակ շահարկվում է Արևելյան Այսրկովկասում միայն XX դարում հանդես եկած Ադրբեջան կոչված պետության կողմից։

Հոդվածում փաստական նյութի հիման վրա ներկայացվում են իրանական թրքախոսների ինքնության ձևավորման գործընթացն ու դրան բնորոշ առանձնահատկությունները Արևելյան Այսրկովկասում բնակվող թյուրքախոս մահմեդականների էթնիկ նույնականացման նմանատիպ գործընթացից։ Վերջիններս Ադրբեջանը քաղաքական շահարկումների միջոցով փորձում է ձևակերպել որպես Իրանի հյուսիսարևմտյան պատմական երկրամասի՝ Ատրպատականի նկատմամբ տարածքային հավակնությունների և «Մեծ Ադրբեջանի» ստեղծման ու պանթյուրքիզմի ծրագրերի իրականացման հիմք։

ԻԻՀ սահմանադրությունը երկրի բնակչության էթնիկ հատկանիշներին մեծ նշանակություն չի տալիս՝ արձանագրելով, որ «բոլոր մուսուլմանները ներկայացնում են միասնական համայնք»։ Դա լիովին վերաբերում է նաև թյուրքալեզու իրանցիներին։ «Էթնիկ ադրբեջանցիներ» տերմինը գործածվում է քարոզչական նպատակներով՝ ընդգծելու համար իրանական հասարակության առանձին տարրերի օտար բնույթը»։

Հիմնախնդրի լուսաբանման առնչությամբ քննության են առնվել ԻԻՀ հյուսիսարևմտյան հատվածի՝ Ատրպատականի և կովկասյան Ալբանիայի աշխարհագրական սահմանների, իրանական Ադրբեջանում լեզվական, XIX դարում և XX

դարի սկզբին Իրանում տեղի ունեցած էթնոքաղաքական տեղաշարժերի ու ադրբեջանցիների էթնիկ ինքնության ձևավորման հիմնախնդիրները:

Eduard Zohrabyan
PhD, Associate Professor, YSU, Head of Chair at the History of Armenia's Neighboring Countries

ETHNO-POLITICAL MOVES AND PROCESSES OF FORMATION OF THE IDENTITY OF THE TURKIC SPEAKERS IN IRANIAN AZERBAIJAN IN THE XIX AND BEGINNING OF THE XX CENTURIES

Keywords: *Atropatene, Turkic tribes, South Azerbaijan, ethnic groups, national identity, self-awareness, nationalistic concepts, motherland, tribal affiliation, Turkic and Azeri.*

In modern geopolitical processes, issues of ethnic identity occupy a significant place in the light of the formation of both interethnic and interstate military-political relations. In particular, in regions with a multi-ethnic characteristic, the issue of ethnic identity is of paramount importance. This often leads to conflicts. Among them, the factor of ethnic identity and self-identification of Iranian Azerbaijanis occupies a special role, which for a century has been manipulated by the state called Azerbaijan, which was formed in the Eastern Caucasus only in the 20th century.

Based on factual material, the article presents the process of formation of the identity of Iranian Azerbaijanis and the differences from the similar process of ethnic identification of Turkic-speaking Muslims living in the Eastern Caucasus. Azerbaijanis are trying, through political manipulations, to substantiate territorial claims to Atrpatakan, the historical territory of northwestern Iran, the creation of "Great Azerbaijan" and the implementation of pan-Turkism programs.

The Iranian Constitution does not attach much importance to the ethnic characteristics of the country's population, stating that "all Muslims constitute a single community." This fully applies to the Turkic-speaking Iranians. "The term 'ethnic Azerbaijanis' is used for propaganda purposes to emphasize the foreign character of some elements of Iranian society."

In connection with the coverage of the issue, the geographical boundaries of the northwestern part of Iran, Atrpatakan, Caucasian Albania, linguistic problems in Iranian Azerbaijan, problems of ethno-political movements in Iran in the 19th and early 20th centuries and the formation of the ethnic identity of Azerbaijanis were considered.

Эдуард Зограбян
кандидат исторических наук, доцент, заведующий кафедрой истории сопредельных стран Армении ЕГУ

ЭТНО-ПОЛИТИЧЕСКИЕ ПЕРЕДВИЖЕНИЯ И ПРОЦЕССЫ ФОРМИРОВАНИЯ ИДЕНТИЧНОСТИ ТЮРКОЯЗЫЧНЫХ В ИРАНСКОМ АЗЕРБАЙДЖАНЕ В XIX И НАЧАЛЕ XX ВЕКА

Ключевые слова: Атропатена, тюркские, Южный Азербайджан, этнические группы, национальная идентичность, самосознание, националистические понятия, родина, племенная принадлежность, турок-азербайджанец.

В современных геополитических процессах вопросы этнической идентичности занимают значительное место в свете формирования как межэтнических, так и межгосударственных военно-политических отношений. В частности, в регионах с полиэтнической характеристикой вопрос этнической идентичности имеет первостепенное значение. Нередко это становится причиной для возникновения конфликтов. Среди них особую роль играет фактор этнической идентичности и самоидентификации иранских азербайджанцев, чем в течение века манипулирует государство под названием Азербайджан, возникшее только на Восточном Кавказе в 20 веке.

В статье на основе фактического материала представлен процесс формирования идентичности иранских азербайджанцев и отличия от аналогичного процесса этнической идентификации тюркоязычных мусульман, проживающих на Восточном Кавказе. Последние пытаются путем политических манипуляций обосновать территориальные претензии к Атрпатакану, историческую территорию северо-западного Ирана, создание «Великого Азербайджана» и реализацию программ пантюркизма.

Конституция Ирана не придает большого значения этническим особенностям населения страны, утверждая, что «все мусульмане представляют собой единую общину». Это в полной мере относится и к тюркоязычным иранцам. «Термин «этнические азербайджанцы» используется в пропагандистских целях, чтобы подчеркнуть иностранный характер некоторых элементов иранского общества».

В связи с освещением вопроса были рассмотрены географические границы северо-западной части Ирана, Атропатены, Кавказской Албании, лингвистические проблемы в Иранском Азербайджане, проблемы этнополитических движений в Иране в XIX и начале XX веков и формирование этнической идентичности азербайджанцев.

* * *

Ներածություն: 1918 թ. ստեղծված Ադրբեջանի Հանրապետությունը լայնորեն օգտագործում է իրանական Ադրբեջանի հիմնահարցը, որը վերածվել է Իրանի ու Ադրբեջանի

հարաբերությունների լրջագույն մարտահրավերի: Սեփական էթնիկ ինքնության փնտրտուքի մեջ գտնվող ադրբեջանական իշխանություններն ու պատմագիտական միտքը բոլոր հնարքները գործադրում են՝ նույնականացնելու իրենց էթնիկ ինքնությունը իրանական ադրբեջանցիների հետ: Շրջանառվում է բաժանված նույն ժողովրդին Ադրբեջանի Հանրապետության մեջ միավորելու ծավալապաշտական ու հակագիտական խիստ վտանգավոր գաղափարը:

Հիմնախնդրի հետազոտությունը դուրս է զուտ պատմաճանաչողական, գիտատեսական շրջանակներից և ունի նաև գործնական, քաղաքական արդիական նշանակություն: Ադրբեջանական քաղաքական, հասարակական, գիտական շրջանակները լայնորեն շահարկում ու կիրառում են խորհրդային տարիներից շրջանառության մեջ դրված «Հարավային Ադրբեջան» տերմինը: Ադրբեջանի կողմից տակավին 1918 թ. շահարկվող այս խնդիրը նախկինում ԽՍՀՄ-ի կողմից Իրանի, իսկ ներկա պատմափուլում արևմուտքի կողմից ԻԻՀ-ի վրա աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական առկա պայմաններում վերածվել է քաղաքական ազդեցության տարածման նպատակով տնտեսական պատժամիջոցներ կիրառելու և զիջումներ կորզելու հարմար գործոնի:

Իր հերթին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության սայլին լծված ադրբեջանական պատմագիտությունը, որը մշակել է հարևան երկրների պատմությունը վերաշարադրելու, կեղծելու և արժեքները յուրացնելու տեխնոլոգիաներ, հավակնություններ է ներկայացնում հարևան Իրանի պատմական տարածքների նկատմամբ՝ շահարկելով Իրանի «էթնիկ ադրբեջանցիների» առկայության գործոնը: ***Գիտական նորույթը:*** Հիմնահարցը հայոց պատմագիտության մեջ համակողմանիորեն բավարար խորությամբ չի հետազոտվել: Հոդվածում փորձել ենք լրացնել այդ բացը: XIX-XX դարերում Իրանում տեղի ունեցած էթնոքաղաքական տեղաշարժերի համատեքստում իրականացրել ենք իրանական Ադրբեջանի թրքախոսների էթնիկ ինքնության ձևավորման վերլուծություն և Արևելյան Այսրկովկասում միայն XX դարի 30-ական թթ. վերջերից քաղաքացիություն ստացած «ադրբեջանցի» հանրույթի էթնիկացման գործընթացների ամփոփ համեմատություն:

Հիմնախնդրի հետազոտությունն սկսվել է տակավին խորհրդային տարիներին: Քաղաքական պատվերի հենքի վրա Ադրբեջանում ազգակերտման գործընթացի արհեստական պահանջը չշրջանցեց պատմագիտությունը: 1930-ական թթ. վերջերից սկսվեց պատմության ադրբեջանացման գործընթացը: Պատմության կեղծարարությունն ու նենգափոխումը դարձան ադրբեջանական պատմագիտական մտքի անբաժան ուղեկիցը և շարունակվում են նաև այսօր: Խորհրդային տարիներին ադրբեջանցի ու նրանց գրչակից օտար հեղինակների կողմից ստեղծվել են հիմնախնդրի վերաբերյալ մի շարք աշխատություններ (Алиев И., Алиев К., История Азербайджана, под. ред. Сумбатзаде А., Гулиева А., Токаржевского Е., Ямпольский И., Гейбулаев Г. Бунятов З. և ուրիշներ): Վերոհիշյալ հեղինակները Ադրբեջանի թյուրք եկվորների պատմություն ստեղծելու, այն հնացնելու, տարածաշրջանի տեղաբնիկների պատմությունն ու մշակույթը յուրացնելու, տեղաբնիկների տարածքների նկատմամբ իրավազորություն ապահովելու նպատակով շահարկման առարկա են դարձնում իրանական Ադրբեջանի թյուրքախոս բնակչության առկայության հանգամանքը՝ այն համարելով ինքնության նույնականացման առանցքային գործոն:

Հոդվածի նպատակն է փաստական նյութի հիման վրա ներկայացնել XIX-XX դարերում Իրանում տեղի ունեցող էթնոքաղաքական զարգացումները՝ դրանից արտածելով իրանական Ադրբեջանում թրքախոսների ու Արևելյան Այսրկովկասում հաստատված թյուրք մահմեդականների ինքնության ձևավորման բնորոշ գործընթացները: Վերջիններս Ադրբեջանը քաղաքական շահարկումների միջոցով փորձում է ձևակերպել որպես Իրանի հյուսիսարևմտյան պատմական երկրամասի՝ Ատրպատականի նկատմամբ տարածքային հավակնությունների, «Մեծ Ադրբեջանի» ստեղծման ու պանթյուրքիզմի ծրագրերի իրականացման հիմք:

Առաջադրված նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

. լուսաբանել իրանական ադրբեջանցիների ինքնության ձևավորման գործընթացի ինքնատիպությունը,

. ցույց տալ դրա տարբերիչ առանձնահատկությունները Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս մահմեդականների ադրբեջանացման գործընթացից,

. բացահայտել աշխարհագրական և էթնոքաղաքական այն միջավայրերի տարբերությունները, որտեղ տեղի է ունեցել այդ էթնիկ հանրույթների ձևավորումը:

. մերկացնել Ադրբեջանի տարածքային, ծավալապաշտական նկրտումները ԻԻՀ-ի նկատմամբ,

. դիտարկել հիմնախնդիրը աշխարհաքաղաքական արդի զարգացումների համատեքստում:

Ատրպատականի և Ալբանիայի աշխարհագրական սահմանները: Իրանական Ադրբեջան անվանում ստացած տարածաշրջանը գտնվում է Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիսարևմտյան հատվածում՝ ներառելով մի քանի նահանգներ՝ Արևելյան Ադրբեջան, Արևմտյան Ադրբեջան, Արդեբիլ: Զենջան նահանգը, թեև չի մտնում իրանական Ադրբեջանի սահմանների մեջ, սակայն մեծ մասամբ բնակեցված է ադրբեջանցիներով: Իրանական Ադրբեջանը հիմնականում ընդգրկում է պատմական Ատրպատականը, որը հնագույն ժամանակներում հայտնի էր նաև Մեդիա, Մարաստան, Մադ-Աթուրփաթեն անուններով, և բնակեցված էր մարերով, պարսիկներով, բայց ոչ երբեք թյուրքական ցեղերով, որոնք այստեղ հայտնվել են XII դարից սկսած (Шнирельман, 2003, 101):

Ադրբեջանական ազգի ձևավորման գործընթացը հեռու էր ավարտից, երբ ռուսաստանյան կայսրության փլուզումից հետո՝ 1918 թ., ստեղծվեց ԱԺՀ-ն (Զոլյան, «21-րդ ԴԱՐ», 2007, 26): Արևելյան Այսրկովկասում 1918 թ. թուրքական սվինների օգնությամբ գոյացած նոր պետության Ադրբեջան անվանադրությամբ ականապատվեց իրանական Ադրբեջանը, այն թիրախավորվեց ԱԺՀ-ի կողմից թե՛ տարածքային, թե՛ էթնիկ, թե՛ պատմամշակութային արժեքների սեփականացման առումներով: Խորհրդային Ադրբեջանի կապակցությամբ Ռուբենը գրում է. «Իրանի ամբողջական անկումը լրիվ դարձնելու համար նախկին Աղվանից աշխարհը, Շիրվանն ու Շաքին, Բաքուն այժմ դարձել է Ադրբեջան՝ իբր Խորհրդային Հանրապետություն: Պատահական չէ, որ նրա անունը Ադրբեջան է, որովհետև նրա առաջին նպատակը Իրանի Ատրպատականի գրավումն է» (Ռուբեն, 2021, 173): Նույն տեսակետն է պնդում նաև հայտնի գիտնական Վ. Բարտոլդը՝ գրելով, որ «Ադրբեջան» տերմինն ընտրվեց որպես նոր ստեղծված պետության անվանում, քանի որ կար հեռահար նպատակ միավորելու պարսկական նույնանուն նահանգի հետ» (Бартолд, 1963, 775):

Ինչպես գրում է Էնայաթոլա Ռեզան, այն երկիրը, որը տասնամյակներ առաջ կոչվում էր «Ադրբեջանի Հանրապետություն», իսկ հետո՝ «Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական

Հանրապետություն», հնում կոչվել է «Ալբանիա»: Հին պատմաբաններն ու աշխարհագրագետները, որոնք հիշատակել են այս երկիրը, հստակորեն տարբերել են այն «Ադրբեջան»-«Ատրպատականից» (Энаятолла Реза, 2020, 22): Նշանավոր գիտնական Ահմադ Քասրավի Թաբրիզին գրում էր. «Ադրբեջան անունը ողջ երկու հազարամյակ ամենահայտնի իրանական տեղանուններից էր, և յուրաքանչյուր դարաշրջանում մարմնավորել են պատմական կարևոր իրադարձություններ...»: Պարսկերեն գրված գրքերում բոլոր ձևերը հայտնի են՝ Ադրբեջան, Ադրբեգան, Ազարբադագան: Ֆիրդուսին գործածում է «Ազարաբադագան» ձևը (Энаятолла Реза, 2020, 22):

Հույն աշխարհագրագետ Ստրաբոնը գրում էր, որ Աքեմենյան պետության անկումից հետո Իրանն անցավ Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետության տակ: Ադրբեջանում հայտնվեց «Ատուրպատ» անունով հրամանատարը, որը փրկեց այս երկիրը: Այն մտնում է Մեդիայի մեջ և կոչվում է «Փոքրիկ Մեդիա»: Երկիրը նրա անունով կոչվեց «Ատուրպատական» (Энаятолла Реза, 2020, 22): Այսպիսով՝ Ատուրպատ անունը ընդունած երկիրը սկսեց կոչվել Ատուրպատական, իսկ ավելի ուշ՝ Ազարբադագան, Ազարբայգան: Արաբները, քանի որ իրենց լեզվում բացակայում էր «գ» հնչյունը, այս երկիրն անվանել են Ադրբեջան, որը ներկայումս գործածվում է ամենուր (Энаятолла Реза, 2020, 22):

Այսպիսով, միևնույն՝ *Ադրբեջան* անվանումը կրող Ադրբեջան և Աղվանք երկրները պատմականորեն տարբեր էին, որոնք թե՛ էթնոքաղաքական, թե՛ սոցիոմշակութային առումներով անցել են զարգացման դարավոր ինքնատիպ ուղի և աշխարհագրորեն անգամ ընդհանուր սահմաններ չեն ունեցել:

Լեզվի խնդիրն իրանական Ադրբեջանում: Ինչո՞ւ է կարևորվում լեզվի խնդիրը: Ադրբեջանցիների մեջ թյուրքական շերտի հիմնական ժառանգությունը մնում է, փաստորեն, միայն լեզուն (Վարդանյան, «21-րդ ԴԱՐ», 2013, 76): Ատրպատականի թրքախոսների և կովկասյան թաթարների (ադրբեջանցիների) ինքնության նույնականացման հիմքում թե՛ խորհրդային և թե՛ հետխորհրդային ադրբեջանական պատմագիտությունը առաջին հերթին դնում է թրքախոսության հանգամանքը: Դրա շուրջ ստեղծված տարբեր հայեցակարգերում փորձ է արվում թուրքերին դարձնելու տեղաբնիկներ, Ատրպատականը՝ թուրքերի երկիր, իսկ թուրքերենը՝ որպես այդ տեղաբնիկների հնագույն ու անփոփոխ հաղորդակցման միջոց: Ատրպատականի բնակչության թրքախոս լինելու վերաբերյալ հայեցակարգը հիմնավորելիս ադրբեջանական պատմագրությունը առանց ապացուցողական որևէ վավերագրի հայտարարում է, որ իրենք արդեն Ք.հ. VII դարում արաբական աղբյուրներից ունեն հստակ տեղեկություններ, որ Ադրբեջանը թյուրքերի երկիրն է: Իսկ եթե դա այդպես է, ուրեմն այդտեղ չի եղել նաև իրանալեզու բնակչություն: Այս մերկապարանոց ու անհիմն պնդումն ընդամենը գիտականությունից հեռու մտավարժանք է:

Ադրբեջանի բնակչությունը մինչ թյուրքական ցեղերի ներթափանցումը եղել է բացառապես իրանական: XII դարի կեսերից թուրքերը աստիճանաբար սկսում են բնակեցնել Ադրբեջանն ու նրան հարող Այսրկովկասի շրջանները հյուսիսից: Արդյունքում XVI դարի սկզբին այս շրջանները, բացառությամբ Հայաստանի, մեծ մասամբ դարձան թյուրքալեզու: 1502 թվականից Ադրբեջանը դառնում է նորաստեղծ իրանական Սեֆյան հարստության հենակետը: Վերջիններս եկել էին Արդաբիլից և խոսում էին տեղական իրանական ազարի բարբառով: Այն Ադրբեջանի բնակչության հին լեզուն է, որը գոյատևել է մինչև XVI դարը և սերտորեն կապված

է եղել կասպյան ավազանի իրանական բարբառների՝ թալիշների, հարավային թաթերի հետ և այլն։ Ըստ ավանդության՝ դինաստիայի հիմնադիրը՝ շեյխ Սաֆի-ադ-դին Արդաբիլին, բանաստեղծություններ էր գրում իր լեզվով։ Ըստ Մասուդի Ազարի՝ լեզուն կամ ալ-ազարիան, ըստ երևույթին, միավորել է մեծ թվով բարբառներ (ըստ Մասուդիի՝ 70)։ Ամենայն հավանականությամբ, բարբառների այս համախումբը երբեք չի փոխակերպվել։ Այս բարբառներն այդպես էլ միասնական լեզվի չվերածվեցին, և լեզուն դուրս մղվեց պատմական ասպարեզից։

Ազարի լեզվի գոյության մասին անուղղակի պատմական տվյալների հետ պահպանվել են նաև ուղիղ տեքստային վկայություններ մեկ տասնյակից ավելի բանաստեղծական հատվածների տեսքով։ Այս տեքստերը միասին հավաքված են Ա. Քասրավիի հայտնի աշխատության մեջ։ Նա տալիս է ազարի լեզվի 18 նմուշ, որոնցից չորսը ընդամենը մի քանի բառից բաղկացած կարճ դարձվածքներ են, իսկ մնացածը՝ քառատողեր։ Հիմնական լեզվական նյութը տրվում է քառյակներով, որոնց մեծ մասը լեգենդը վերագրում է հենց Շեյխ Սաֆիին՝ Սեֆյանների դինաստիայի հիմնադիրին (Асатрян Г., 1991, 488)։

Բ. Միլլերը, հիմնվելով Ա. Քասրավիի նյութի և որոշ այլ տվյալների վրա, կասպիական բարբառներից թալիշերենը համարում է ազարի լեզվի ժառանգ։ Նա գրում է. «Քասրավիի վկայակոչած բոլոր «ադրբեջանական» նյութերում մենք պետք է տեսնենք Արդեբիլցիների և Արդեբիլի շրջանի լեզվի արտացոլումը, ժամանակակից թալիշների նախնիների լեզուն, բայց արդեն XIV դարի առաջին կեսին»։ Իր ենթադրությունը հաստատելու համար Բ. Միլլերը մեջբերում է Ա. Քասրավիի տեքստերից որոշակի թվով բառաձևեր, ինչպես նաև մի քանի հնչյունական օրինաչափություններ, որոնք զուգահեռներ են գտնում թալիշերենում։ Ընդհանրապես, նրա բերած օրինակներն ու համեմատությունները համոզիչ են (Асатрян, 1991, 488)։

Պատմական Ադրբեջանում իրանական բնակչության առկայության օգտին են խոսում նաև գենետիկական հետազոտությունները։ Իրանական ադրբեջանցի բժիշկ Մազիար Աշրաֆյան Բոնաբի գլխավորած Քեմբրիջի համալսարանի գենետիկների խմբի կողմից իրականացված Իրանի բնակչության գենետիկական լանդշաֆտի ուսումնասիրությունը վկայում է, որ «Իրանում տարբեր լեզուներով խոսող, այդ թվում հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական խմբերի ԴՆԹ լայնածավալ թեստավորման արդյունքներով Իրանի ադրբեջանցիների մոտ բացակայում է Անատոլիայի ու Եվրոպայի թուրքերի գենետիկական մարկերը։ Իրանցի ադրբեջանցիների գենետիկ հատկանիշները նույնական են Իրանի պարսիկների հետ» (Karim Majid, 2020, 29)։

Այդ կապակցությամբ Ռաշիդվաշը գրում է. «Պատճառն այն է, որ Ատրոպատգանում հաստատված մարդկանց մեջ չի նկատվում հյուսիսում գտնվող դեղին ռասային առնչվող ոչ մի հատկանիշ, ինչպիսիք են դեղնավուն մաշկը, բարակ և երկարացված հոնքերը, օվալաձև աչքերն ու մեծ այտերը, որոնք թուրք ժողովրդի ամենաակնառու հատկանիշներն են... Նրանք ունեն արիական հատուկ հատկանիշներ, ինչպիսիք են բաց գույնի աչքերն ու մազերը, նույնիսկ արաբների և թուրքերի երկար տարիների արշավանքներից հետո» (Ռաշիդվաշ Վահիդ, 2012, 146)։

Հպանցիկ այս ծանոթացումը լեզվին ու գենետիկ հիմնախնդիրներին բավական է ի չիք դարձնելու համար ադրբեջանական քարոզչական բոլոր պնդումները «երկփեղկված ադրբեջանցիների» էթնիկ նույնականացման վերաբերյալ։ Այդ մասին են վկայում նաև Ադրբեջանի մասին մի քանի համաշխարհային հանրագիտարանների տեղեկությունները՝ զետեղված Բրիտանական հանրագիտարանի առաջին տպագրության (1768-1771 թթ.),

Ռուսական կայսրության Բրոքհաուզի ու Եֆրոնի (1890-1907 թթ.) և իսլամի թեմայով առաջին (1913-1930 թթ.) հանրագիտարաններում: Իսլամի հանրագիտարանի առաջին հրատարակչության մեջ՝ 1913 թ., Ադրբեջան անունը վերաբերում էր միայն Իրանական Ատրպատականին, Կովկասյան Ադրբեջանի մասին հանրագիտարանում խոսք չկար: Հանրագիտարանում նշվում էր, որ «ժամանակակից Ադրբեջանը հյուսիսից սահմանակից է Կովկասին» (Նահապետյան, 2014, 62):

Ռուսական Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտարանի համաձայն՝ «Азербайджан»-ը Պարսկաստանի հյուսիսարևմտյան շրջանն է, որը Ռուսահայաստանից բաժանված է Արաքս գետով: Փաստորեն՝ կայսերական հանրագիտարանը ողջ Ղարաբաղը նույնպես դիտարկել է որպես Ռուսահայաստանի մեկ մաս (Նահապետյան, 2014, 67):

1960 թ. Իսլամի հանրագիտարանի երկրորդ հրատարակության մեջ Ադրբեջանը ներկայացված էր որպես Պարսկաստանի շրջաններից մեկը: Նշվում է նաև, որ գոյություն ունի կովկասյան ոչ անկախ Ադրբեջան: «Թուրքական զորքերը Նուրի փաշայի գլխավորությամբ Բաքուն գրավեցին 1918 թ. սեպտեմբերի 15-ին և նախկին շրջանը վերաձևակերպեցին Ադրբեջան անվան տակ՝ դա բացատրելով Պարսկաստանի հյուսիսի՝ Ադրբեջանի շրջանի թյուրքախոսների հետ նմանությամբ»,– գրված է հանրագիտարանում (Նահապետյան, 2014, 62):

Էթնիկ-ազգային խնդիրներն Իրանում: Իրանի Իսլամական Հանրապետությունը բազմազգ երկիր է, ինչի պատճառով ազգային հիմնահարցը այս պետության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկն է: Էթնիկ ազգայնականությունը ցանկացած երկրի կյանքում կարևոր գործոն է, որը պետք է հաշվի առնել ներքին անվտանգության ամրապնդման առումով, հատկապես քաղաքակրթությունների ու էթնիկ խմբերի խաչմերուկում գտնվող Իրանում: Իրանի էթնիկ ազգայնականները արևմտյան և հարավարևելյան շրջաններում, որտեղ նկատելի է տնտեսական ու կրոնական իրավիճակի տարբերություններ կենտրոնական նահանգներից, տեսնում էին, որ դրանցում առկա են արտաքին ուժերից ներշնչված սադրանքների հնարավորություններ: Առաջ է բերվում «բաժանված ժողովուրդներ» («irredentism») հասկացությունը և, բնական է, հարևան երկրների էթնիկ խմբերի հետ միասնական ամբողջության մեջ միավորվելու ցանկությունը (Раванди-Фадаи Л., 2013, 209-219):

Մի կողմից Իրանը հնարավորություն է ստանում ազդելու իր հարևանների վրա, սակայն, մյուս կողմից, հարևանները կարող են դրդել «իրենց» էթնիկ խմբին Իրանում միջէթնիկ հակամարտություններ հրահրել: Հարցը, որն ամենաշատ դժգոհությունն է առաջացնում ազգային փոքրամասնությունների շրջանում մայրենի լեզվով դպրոցների բացակայությունն է: Որքանով պետք է պետությունը թույլ տա էթնիկ խմբերին արտահայտվել և զարգացնել իրենց հստակ էթնիկ ու ազգային ինքնությունը չափազանց դժվար խնդիր է: Օրինակ՝ Միացյալ Նահանգները հաճախ քննադատում է այլոց ազգային քաղաքականությունը՝ տարբեր երկրներում ազգային փոքրամասնությունների հետ կապված, ներառյալ Իրանը, բայց ամերիկյան պետական կրթական հաստատություններում դասընթացները անցկացվում են միայն անգլերենով՝ չնայած նրան, որ 2010 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ ԱՄՆ բնակչության 16,3 %-ը իսպանախոս է: Նրանց մասնաբաժինը հարավարևմտյան նահանգներում շատ ավելի մեծ է (օրինակ՝ Կալիֆոռնիա նահանգում՝ 37, 6 %): Բայց նույնիսկ Կալիֆոռնիայում պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը կատարվում է միայն անգլերենով: Ամերիկացի քաղաքական գործիչների համար անվիճելի է

թվում միասնական պետական լեզվի կարևորությունը: Դեռևս 1907 թ. Միացյալ Նահանգների նախագահ, 1906 թ. Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Թ. Ռուզվելտը նշել էր, որ լեզուն անգլերենն է, որովհետև մենք մտադիր ենք ստեղծել մեր քաղաքացիներին՝ որպես ամերիկացիների, ամերիկյան ազգության մարդիկ (Раванди-Фадаи Л., 2013, 209-219):

Իրանի էթնիկ պատկերը, ըստ բնակչությանը լեզվական հատկանիշի, բաժանման հետևյալն է.

- իրանախոս՝ պարսիկներ՝ ընդհանուրի 51 %-ը, քրդեր՝ 7,5 %, գիլանցիներ, մազանդարներ՝ 8 %, լուրներ՝ 2 %, բելուջներ՝ 2 %, բախտիյար ցեղախումբ, աննշան թվով տաջիկներ, աֆղաններ, թալիշներ և այլն;
- թյուրքախոս խումբ՝ ադրբեջանցիներ 24,5 %, թուրքմեններ՝ 2 %, ուզբեկներ և քաշքայներ՝ 2 %-ից պակաս;
- արաբախոս խումբ՝ արաբներ ավելի քան 2 %:

Իրանում բնակվում են հայեր, ասորիներ, հրեաներ և մի քանի հազար էթնիկ վրացիներ, մոտ 2 հազար ռուսներ (Раванди-Фадаи Л, 2013, 209-219):

Իրանում ադրբեջանցիների թիվը վերջին տարիներին դարձել է տարբեր շահարկումների թեմա: ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին տարիներին ներկայացվում էր 33 միլիոն թիվը: Ընդ որում, այդ ժամանակ ողջ Իրանի բնակչությունը կազմում էր 60 միլիոն, ինչը նշանակում էր՝ Իրանի բնակչության 50 %-ը ադրբեջանցիներ են (Асатрян, 2012, 51): Տարիներ անց հայտնվեց մեկ այլ թիվ՝ 20 միլիոն ադրբեջանցիներ: Այս թիվը կիրառում են նաև ռուսական քաղաքական ու հասարակական շրջանակները (Асатрян, 2012, 51): Նշվում էր նաև, որ Իրանի մայրաքաղաքի բնակիչների մեծ մասը ևս ադրբեջանցիներ են: Սակայն 2006 թ. անցկացված հանրաքվեի արդյունքները ցույց են տալիս, որ Արդաբիլում ապրում են 1.228.155, Արևելյան Ադրբեջանում՝ 3.603.456, Արևմտյան Ադրբեջանում՝ 2.879.459, իսկ Զենջանում՝ 964.601, Կազվինում՝ 1.143.200 ադրբեջանցի: Ընդհանուր հաշվարկներով Իրանում ապրող ադրբեջանցիների թիվը հասնում է 9.094.105-ի (Асатрян, 2012, 51):

Ամենամեծ ազգային փոքրամասնությունը կազմում են թրքախոս իրանցիները: Վերջին տարիներին ադրբեջանական պատմաբանների ջանքերով գրվում են տասնյակ աշխատություններ՝ ապացուցելու համար, որ Իրանում ապրող ադրբեջանցիները դարեր շարունակ մղել են ազգային ազատագրական պայքար, և վերջիններիս մոտ ընդգծված է եղել ազգային ինքնության ու ինքնագիտակցության զգացումը: Սակայն նույն ադրբեջանական պատմագիտության կեղծ թեզերից շատերի հեղինակ տխրահռչակ Զիա Բունիաթովի՝ արցախյան առաջին պատերազմի օրերին իրանական թրքախոսներին ուղղված կոչերը հայերի դեմ համատեղ պատերազմելու վերաբերյալ մնացին անպատասխան, և նա ստիպված էր խոստովանել. «... Հերթական անգամ զգացի, որ լեզվի միասնություն չի նշանակում ժողովրդի միասնություն»:

Եթե «ադրբեջանական միասնության» գաղափարի նման եռանդուն ջատագովը միայն մեկ այցելության ընթացքում գիտակցել էր իրերի իրական վիճակը, ապա օբյեկտիվ հետազոտողի համար իրավիճակը պետք է լիովին ակնհայտ լինի (Асатрян, 2012, 79):

1804-1813 թթ. և 1826-1828 թթ. ռուս-պարսկական երկու պատերազմներում Ռուսաստանի հաղթանակները վերջ դրեցին Կովկասում Պարսկաստանի տիրապետությանը: 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Պարսկաստանը ճանաչեց Ռուսաստանի բոլոր նվաճումները Այսրկովկասում: Ռուսաստանի սեփականությունն էին համարվում Դաղստանը, Վրաստանը, Մեգրելիան, Իմերեթը, Գուրիան, Աբխազիան, Ղարաբաղի, Գանձակի, Շաքիի,

Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի ու Թալիշի խանությունները, Լոռու, Ղազախի, Շամշադինի, Զանգեզուրի և Շիրակի գավառները (Асатрян, 2012, 199):

1828 թ. Թուրքմանչայի պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանը հաստատեց Գյուլիստանի պայմանագրի բոլոր պայմանները, հարավարևելյան Այսրկովկասը, ներառյալ Կասպից ծովի ափը՝ մինչև Աստարա, ինչպես նաև Արևելյան Հայաստանը, անցան Ռուսական կայսրության տիրապետության տակ: Արաքս գետը դարձավ պետությունների սահմանաբաժանը:

Տարիներ անց խորհրդային քաղաքական ու հասարակական գործիչների կողմից ստեղծվեց, այնուհետև ադրբեջանական կողմին փոխանցվեց ադրբեջանցի ժողովրդի մասնատման և երկու հատվածների վերամիավորման անհրաժեշտության վերաբերյալ առասպելը: Վերջինս սնուցվում էր թյուրքախոսների ինչպես լեզվական, այնպես էլ դավանական միասնության գաղափարից: Ուշագրավ է, որ տակավին XIX դարի երկրորդ կեսին Մ. Ֆաթալի Ախունդովի կողմից ստեղծված նոր այբուբենը կոչվում էր «մահմեդական»: Հետաքրքիր դրվագ է ներկայացնում Գ. Ասատրյանը. 1908 թ. հունվարի 12-ին Ու. Հաջիբեկովի «Լեյլա և Մեջնուն» օպերայի ազդագրի վրա գրված էր «Օպերա՝ մահմեդական լեզվով» (Асатрян, 2012, 72):

Արդյո՞ք այս երկու հատվածները ունեին նույնական զգացումներ ու ազգային գիտակցություն և արդյո՞ք համանման գաղափարներով էին առաջնորդվում: Արդյո՞ք կարող ենք տվյալ ժամանակաշրջանում խոսել ադրբեջանցիների ազգային գիտակցության առկայության մասին:

Ինքնության ձևավորման էթնոքաղաքական գործընթացներն Իրանում: Իրանում ազգայնական գաղափարների բյուրեղացումը սկսվեց XIX դարի սկզբներից: Այս ժամանակահատվածում միջնադարյան ֆեոդալական հարաբերությունները սկսեցին իրենց տեղը զիջել նոր ձևավորվող կապիտալիստական կացութաձևին, որին նպաստեցին Բրիտանիան ու Ֆրանսիան: 1801 թ. Ֆաթհ Ալի Շահը պայմանագիր կնքեց բրիտանական կառավարության հետ, ըստ որի՝ գահի հպատակները իրավունք էին ստանում ազատորեն հաստատվելու Իրանի նավահանգիստներում, մի շարք ապրանքներ ազատվում էին ներմուծման մաքսատուրքից, իսկ Հնդկաստանի վրա Նապոլեոնի հարձակման դեպքում Իրանը ստիպված էր ուղարկել իր զորքերը դեպի Աֆղանստան: 1856 թ. համանման պայմանագիր կնքվեց ԱՄՆ-ի հետ: Նմանատիպ արտոնություններ ստացավ նաև Ռուսաստանը 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրով (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

Մեծ տերությունները, առաջին հերթին՝ Անգլիան, Կաջարների դինաստիային տրամադրեցին սուբսիդիաներ ու փոխառություններ, աջակցեցին բաբիդների ապստամբությունները ճնշելուն՝ դրա դիմաց ստանալով նոր զիջումներ: XIX դարի երկրորդ կեսին կազմակերպեց Պարսկաստանի Շահինշահ (կայսերական) բանկը, որը վերցվեց շահի դրամահատարանի հսկողության տակ (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

Իրանի մտավոր վերնախավը պատկերացում ուներ, թե ինչ է կատարվում XVIII դարի վերջին Եվրոպայում և ծանոթ էր այն գաղափարներին ու իրադարձություններին, որոնք նախորդել ու ուղեկցել են ֆրանսիական քաղաքացիական և գերմանական «ռոմանտիկ»

ազգայնականության վերելքին: Միջնադարյան հայրենասիրության վրա հիմնված Ֆիրդուսու «Շահ-նամեն» ու Կազվինի «Զաֆար-նամեն» լայն ճանաչում ձեռք բերեցին: Մի բուռ եվրոպական կրթություն ստացած մտավորականներ (ռովշանֆեկրան), սկսեցին զարգացնել միասնությունը, ինքնիշխանությունը և ժողովուրդը՝ որպես քաղաքականության սուբյեկտ (շահրվանդան), ամբոխ-օբյեկտ (ռայա) ազգայինի գաղափարների ընկալումները (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

Եվրոպական լեզուներում «ազգ» տերմինը, ինչպես ցույց է տալիս Լ. Գրինֆելդը, առաջին անգամ գործածվել է ժամանակակից իմաստով Անգլիայում XVI դարում և մինչև XVIII դարավերջն ու XIX դարասկիզբը տարածվեց մայրցամաքային Եվրոպայում: Պարսկերենում «մելլաթ» տերմինի՝ որպես «ազգ» հասկացության համարժեք վերածելու գործընթացը սկսվեց XIX դարում և անցավ երկու փուլով. նախ «Մահմեդական մելլաթ» (mellat-e mosalman) արտահայտությանն ավելացվեց «Իրան» բառը (mellat-e Mosalman-e Iran), իսկ հետո կրոնական բաղադրիչն անհետացավ՝ թողնելով «իրանական ազգը» (mellat-e Iran) (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

XIX դարի երկրորդ կեսին իրանական մամուլն արդեն կիրառում էր մի շարք տերմիններ՝ «ազգայնություն» (meltyat) և «ազգայնական» (melli): Փոխվում է նաև «հայրենիք» (վաթան) բառի իմաստը, որը նախկինում, որպես կանոն, գործածվում էր՝ նշանակելու համար տեղական ծննդյան ու բնակության վայր: Բարեփոխիչ ու մանկավարժ մեծ վեզիր Ամիր Քաբիրը բարձր պաշտոնում իր կարճատև գործունեության ընթացքում (1847-1851) փորձեց սահմանափակել Արևմուտքի միջամտությունը երկրի գործերին: 1876 թ. սկսվեց «Վաթան» երկլեզու թերթի պարսկերեն ու ֆրանսերեն հրատարակությունը: Այս թերթի առաջին համարի խմբագրականում հայրենասիրությունը սահմանվել է որպես ամենաբարձր արժեք: Ընդհանրապես ֆրանսիական միտքը մեծ ազդեցություն է ունեցել իրանական ազգայնականության առաջին ծիլերի վրա: Այսպես, գրող Մոշիր ալ-Դավլան (1828-1881) գրել է՝ ազգի կառուցման հիմքերը առաջարկվում են Ֆրանսիայի կողմից. յուրաքանչյուր ազգ (մելլատ) պետք է ղեկավարվի իրեն պատկանող մարդկանց կողմից (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

Ինչպես տեսնում ենք, XIX դարում Իրանում սկսում էր աստիճանաբար առաջ գալ ազգային ինքնության գաղափարը: Հարկ է նշել, որ այս գործընթացը Ռուսաստանի ու Իրանի տարածքում ապրող թյուրքախոսների մոտ տարբեր դրսևորումներ էր ստանում: Որպես ժողովրդ նրանց կազմավորումը տարբեր հանգամանքներում է ընթացել Ատրպատականում ու այսօրվա Ադրբեջանի տարածքում: «Եթե Արաքսից հարավ աստիճանաբար թյուրքալեզու դարձողը երբեմնի մարերի, պարսիկների, հրեաների, ասորիների ու հայերի հետնորդներն էին, XI դարից սկսած՝ այստեղ թափանցող սելջուկների, ապա թաթարների ու թուրքմենների նստվածքների աստիճանական սերտաճումով, ապա Շիրվանում ու Առանում նշանակալի էր մարզպանական Աղվանքի տեղաբնիկ ցեղերի, ինչպես նաև արաբների, մահմեդականացած հայերի, ինչպես նաև արաբների, վրացիների, ուտիների մասնակցությունը այդ պրոցեսին» (Հայաստանի հարակից երկրների պատմություն,1992, 185):

Պատմականորեն փաստարկված այս պնդումը վկայում է, որ «երկու Ադրբեջանների» էթնիկ նույնականացման գաղափարն ինքնին շինծու է՝ չնայած նրանց երկու ընդհանրական հատկանիշներին՝ թրքախոսությանն ու իսլամադավանությանը: Բացի այդ՝ Շիրվանում ու Առանում թյուրքախոս մահմեդականների էթնիկ ինքնության ձևավորումը, ի տարբերության իրանական Ադրբեջանի, տեղի ունեցավ ավելի ուշ՝ XX դարի առաջին տասնամյակներին,

աշխարհագրորեն բոլորովին նոր, առանձին միջավայրում, որը ենթակա էր քրիստոնյա ռուսական արքունիքի կողմից իրանական ազդեցության վերացմանը: Այսրկովկասի յուրացման համար Ռուսական կայսրությունը փորձում էր նոր գրված հողերի իսլամադավան ժողովուրդներին դուրս բերել Պարսկաստանի հոգևոր ու մշակութային ազդեցության ոլորտից և այդ նպատակով սկսեց իրականացնել տարածաշրջանի իրանազերծման քաղաքականություն (Մանասյան Ա., Ինչո՞ւ ադրբեջանական հանրապետության ցեղասպան վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում): Այդ առումով Ռուսական կայսրությունը մեծ տեղ հատկացրեց փոքրաթիվ, բայց պարսիկների պոտենցիալ մրցակից թյուրքախոս բնակչությանը, որին տվեց «կովկասյան թաթարներ» (кавказские татары) անունը (Մանասյան Ա., Ինչո՞ւ ադրբեջանական հանրապետության ցեղասպան վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում):

Ինչպես իրավացիորեն նշում է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դ. Բաբայանը, Ռուսաստանին միացած Այսրկովկասի թուրքաբնակ տարածքներում սկսվեց ադրբեջանական ազգի կազմավորումը «վերևից» և արդյունք էր ռազմավարական ու մարտավարական աշխարհաքաղաքական հաշվարկների՝ կապված մեծ տերությունների պայքարի հետ: Այս գործընթացը սկսվեց Այսրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո: Ադրբեջանական նոր ժողովրդի կազմավորման գործընթացն անցավ թաթարացում-թուրքացում-ադրբեջանացում շղթայով: Ամենաերկարատևը առաջին փուլն էր՝ թաթարացումը: Ամենակարճը վերջին փուլն էր՝ ադրբեջանականացումը (Бабаян Д., Формирование Азербайджанского народа: от татаризации до азербайджанизации):

Հակառակ Ռուսական կայսրության ցանկությանը՝ Կովկասի թաթարները, սակայն, առավել հակվեցին դեպի Թուրքիայի ազդեցությունը: Այսպես ստեղծվեց թուրքական քաղաքականության կամակատար հակառուսական մղումներ ունեցող մի գործոն:

Այդուհանդերձ, Հյուսիսային ու Հարավային Ադրբեջանների հին և անընդհատական, ոչ միայն տարածքային ու քաղաքական, այլև էթնիկական միասնության վերաբերյալ գաղափարը դարձավ այն հիմնական առանցքը, որի շուրջ կառուցվեցին ադրբեջանցիների ծագումնաբանության մասին ադրբեջանցի բոլոր հեղինակների կողմից գրված հիմնական աշխատությունները (Шнирельман, 2003, 101):

Ադրբեջանական որոշ վերլուծաբաններ չեն թաքցնում, որ թե՛ պատմութեան հայեցակարգը, թե՛ «ադրբեջանական» էթնո-ինքնութեան ձեւաւորման գործընթացը յստակ ղեկավարւում եւ ուղղորդւում էր ադրբեջանական խորհրդային իշխանութիւնների կողմից (Խառատեան, 2012, 308):

Իսկ ինչպիսի՞ն էր իրավիճակը Իրանում ապրող թյուրքախոսների մոտ: XIX դարի երկրորդ կեսին Իրանում սկսեցին ակտիվորեն զարգանալ պարբերականները և արևմտյան ոճի կրթական հաստատությունների ցանցը՝ միսիոներական դպրոցներից մինչև Պոլիտեխնիկական համալսարան և քաղաքական դպրոց, գիտություններ, որտեղ դասավանդվել են ազգային պատմության դասընթացներ, սկսեցին հրատարակվել նաև իշխող Կաջարների դինաստիայի պարթևական (իրանական) արմատների մասին գրքեր, զրադաշտականության վերաբերյալ ուսումնասիրություններ, վերահրատարակվեցին Ֆիրդուսիի ու Կազվինիի աշխատությունները (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

Քաղաքական անկման ու մտավոր վերելքի այս շրջանում ի հայտ եկան նաև իրանական էթնոնացիոնալիզմի առաջին գաղափարախոսները՝ գրողներ ու լուսավորիչներ Միրզա Ֆաթալի Ախունդով (1812-1878), Ջալալ ադդին Միրզա Կաջարը, Ֆաթհ Ալի շահի կրտսեր որդիներից մեկը՝ Միրզա աղա Խան Քերմանին (1853-1896): Անհանգստացած ազգի անկմամբ՝ նրանք խնդիրների պատճառները տեսնում էին թե՛ անվերահսկելի ու կոռումպացված իշխանության, թե՛ աշխարհիկ, թե՛ կրոնական իշխող շրջանակների անիրազեկության ու անկարողության մեջ: Նրանք, յուրաքանչյուր մարդուն ներհատուկ սերն առ ազգն ու հայրենիք համարելով հոգևոր պահանջմունք, փառաբանեցին նախաիսլամական պետությունը և կոչ արեցին մաքրվել օտարածին ներխուժումներից, որոնք եկել էին իսլամի հետ միասին, ներառյալ լեզվական փոխառությունները արաբերենից (Галкина Е., Становление нации и пути национализма в Иране):

Անդրկովկասի թաթարների ու Թուրքիայի միջև XX դարում ձևավորվեցին գաղափարական և քաղաքական հարաբերություններ: Օրինակ՝ «Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրում գրվում էր. «Անդրկովկասի խորքերում երևում են կասկածելի անձինք՝ կանաչ չալմաներով, կանաչ դրոշով, և կոչ են անում մահմեդականներին ոչնչացնել գյավուրներին» (Վարդանյան Թ., Թաթարական ազգայնամոլության դրսևորումներն Անդրկովկասում 20-րդ դարի առաջին տասնամյակում): Թաթարական բնակչությունը հավատում էր պանիսլամիզմի հաղթանակին և իրականացնում էր քարոզչություն: Բաքվում հրատարակվում էր «Հայեաթ» («Կյանք») թերթը՝ պանիսլամիստ Ահմեդ Բեկ Աղաևի խմբագրությամբ: Թերթը կոչ էր անում իսլամադավաններին միավորվել իսլամի դրոշի ներքո: Նույն «Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթը գրում էր. «Զենքի առատությունը, ամենուր տարվող քարոզչությունը, թռուցիկների առկայությունը և թաթարական հորդաների ժամանակ առ ժամանակ սահմանի խախտումը հիմք են տալիս մտածելու, որ այս շարժումը կազմակերպված է ոչ միայն տեղական միջոցներով, այն ներկրվում և հովանավորվում է Թուրքիայից» (Վարդանյան Թ., Թաթարական ազգայնամոլության դրսևորումներն Անդրկովկասում 20-րդ դարի առաջին տասնամյակում):

Հարկ է նշել, որ Պարսկաստանի թուրքերը, խոսելով նույն բարբառով Արևելյան Այսրկովկասի թուրքերի հետ, ռուսական աղբյուրներում անվանվում էին «թուրք»: Նրանց նկատմամբ չէր կիրառվում «կովկասյան թաթարներ» տերմինը, չնայած երբեմն հնարավոր էր հանդիպել «թուրք-թաթարներ» անվանմանը: Ռուս հայտնի գիտնական, թուրքագետ ու արևելագետ Իլյա Բերեզինը, նկարագրելով պատմական Ատրոպատենա-Ադրբեջանի բնակչությունը իր 1852 թ. Կազանում հրատարակված «Ճանապարհորդություն Հյուսիսային Պարսկաստանով» աշխատության մեջ, ցույց է տալիս, որ այս գավառի բնակչության մի մասը կազմում էին թյուրքական ու քրդական ցեղերը (Бабаян Д., Формирование Азербайджанского народа: от татаризации до азербайджанизации): Ռուսական բանակի գլխավոր շտաբի կապիտան Լ. Կ. Արտամոնովը, հաշվի առնելով հյուսիսային, սահմանամերձ բնակչությունը, իր «Հյուսիսային Ադրբեջան. ռազմական աշխարհագրական ուրվագիծ» աշխատության մեջ նշում էր, որ առավել ընդգծված են ցեղային պատկանելության զգացումները (Бабаян Д., Формирование Азербайджанского народа: от татаризации до азербайджанизации):

Ինչպես իրանական Ադրբեջանի, այնպես էլ Արևելյան Այսրկովկասի թրքախոսների ինքնության, դրանց նույնականության բացակայության ակնառու վկայությունն են նաև XX հարյուրամյակի սկզբին ծավալված իրադարձությունները տարածաշրջանում: XX դարասկզբին Իրանի հյուսիսային շրջանները դարձան հեղափոխական պայքարի թատերաբեմ: 1905-1911 թթ.

Սահմանադրական հեղափոխության օրերին Թավրիզը դարձավ հեղափոխական պայքարի կենտրոն: Թերևս Իրանի օրինակով է, որ առավել տեսանելի ու ակնհայտ է գործում Ռուսաստանում 1905 թ. իրադարձությունների ազդեցության տակ Ասիայի զարթոնքի մասին հայտնի թեզը: 1905 թ. դեկտեմբերին իշխանությունների հրամանով հին սեյդիի դաժան ծեծը դժգոհության պայթյուն առաջացրեց երկրի բնակչության շրջանում: Տեսնելով այս արարքի մեջ հավատի ծաղրը (սեիդները մարգարեի սերունդներն են) և անարդարության հաղթանակը՝ Թեհրանի բնակիչները դուրս եկան փողոց (Васильев, 2013, 128):

1907 թ. Թավրիզի դեմ դուրս բերվեցին թուրք-ազերի ավատատերերի ջոկատները՝ Ռահիմ խանի գլխավորությամբ: Հետադեմ ուժերը Թավրիզում ստեղծեցին «Իսլամիե» էնջումենը: Այդ կռիվների ընթացքում հետադիմականների դեմ պայքարում աչքի ընկան սահմանադրության կողմնակիցներ Սաթթար խանն ու Բաղիր խանը (Բայբուրդյան, 2006, 521): Ինչպես նշում է Ատրպետը, ինչպես Իրանում, այնպես էլ Ատրպատականում, սահմանադրություն (մեշրութե) ասելով, հասկանում էին շահի ու նրա շրջապատի անսահման կողոպուտը չափավորելու ու կամայականություններից ազատվելու ձգտումը (Բայբուրդյան, 2006, 521):

Հարկ է նշել, որ «Իսլամիե» էնջումենին և հետադիմականներին պարտության մատնելու հարցում աչքի ընկան այսրկովկասյան հեղափոխականները, մեծ մասամբ հայ հայդուկները: Նույնիսկ «Իսլամիե» էնջումենը և նրա կողմնակցիները խիստ նամակ գրեցին Թիֆլիսի հայոց առաջնորդարանին՝ սպառնալով, որ հայերը պատասխանատվության կենթարկվեն, եթե իրենց թաղամասերից չվտարեն հայ ու թուրք ջանֆիդայիներին (Բայբուրդյան, 2006, 522):

Ընդ որում, Թավրիզի հեղափոխականները բավական կապված էին հայ հեղափոխականների հետ, ինչի արդյունքում հնարավոր չեղավ 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումների ալիքը տարածել Ատրպատական: Այս իրադարձությունների ընթացքում իրանական թրքախոսները էթնիկ ինքնության որևէ դրսևորում չցուցաբերեցին:

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ սկզբնաղբյուրներն ու հետազոտությունները XIX դարի ընթացքում, ինչպես նաև XX դարի առաջին կեսին Իրանի հյուսիսում ու Կովկասում բնակվող թուրք-թաթարների շրջանում դեռևս ձևավորված չէր ազգային ինքնության գաղափարը: Վերջիններս ունեին խիստ ընդգծված ցեղային պատկանելության զգացումներ: Կարևոր դեր է խաղում նաև իսլամի գործոնը: ***Եզրակացություններ:*** Իրանական ադրբեջանցիների էթնիկ ինքնության ձևավորման գիտաքննական վերլուծությունը բավականաչափ բարդ խնդիր է, և այն հնարավոր է առավել ամբողջական ու անկողմնակալ ներկայացնել երեք բաղադրիչների համակցության մեջ: Դրանք են.

ա) XIX դարում բազմազգ Իրանում ընթացող էթնոքաղաքական զարգացումների, իրանական թյուրքախոսների էթնիկ նույնականացման գործընթացի ինքնատիպության,

բ) XIX դարի վերջերին Ռուսական կայսրության կազմում գտնվող Արևելյան Այսրկովկասում թյուրքախոս մահմեդականների էթնիկ ինքնության սաղմնավորման գործընթացի,

գ) XX դարի երկրորդ տասնամյակից սկսած՝ նորաստեղծ արհեստածին ԱԺՀ կոչվող պետության ու Խորհրդային Ադրբեջանի կողմից հիշյալ երկու գործընթացները միարժեքացնելու, նրանց էթնիկ նույնականացման բնույթ հաղորդելու ու քաղաքական շահարկումների բովանդակ պարագծումը:

Այս համատեքստում կարող ենք պնդել, որ.

- Ատրպատականում և Արևելյան Այսրկովկասում թրքախոս մահմեդականների էթնիկության սաղմնավորման ու ձևավորման գործընթացները տեղի են ունեցել տարբեր հանգամանքներում, տարբեր էթնոքաղաքական և սոցիոմշակութային գործոնների ազդեցությամբ ու տարբեր էթնիկ բազաների հենքի վրա։
- Իրանական Ադրբեջանում էթնիկ ինքնության ձևավորումը տեղի էր ունեցել ավելի վաղ՝ XIX դարի սկզբից։ Արևելյան Այսրկովկասում այն սկսվել է ուղիղ մեկ հարյուրամյակ անց և մնացել է անավարտ մինչև խորհրդային տարիների վերջը։ Անդրադառնալով Ադրբեջանի պատմությանը՝ լեհ կովկասագետ Թադեուշ Սվետոխովսկին իրավացիորեն նկատում է, որ XX դարի սկզբում «Ադրբեջան» անվանումը զուտ աշխարհագրական եզրույթ էր, որի հիմքում էթնիկություն չկար, իսկ երկրամասի թյուրքախոս բնակչությունն իրեն համարում էր մահմեդական (T. Swietochowski, 1985)։
- Աշխարհագրական տարբեր միջավայրերում է տեղի ունեցել իրանական ադրբեջանցիների ու կովկասյան թյուրքախոսների էթնիկ ինքնության ձևավորումը։
- Իրանը իսլանադավան պետություն է, որտեղ ընթացել է ադրբեջանցիների էթնիկացման գործընթացը։ Արևելյան Այսկովկասում կովկասյան թաթարների էթնիկացումն ընթանում էր քրիստոնյա Ռուսական կայսրության կազմում և այդ նույն արքունիքի անմիջական ջանքերի շնորհիվ՝ իրեն անցած նախկինում Պարսկաստանին ենթակա տարածքներում իրանական ազդեցությունը վերացնելու համար։
- Իսլամադավան Իրանում առաջնայինը ումմայի համայնքի գաղափարն էր, որտեղ էթնիկությունը էական դեր չի խաղում։
- Արևելյան Այսրկովկասում թյուրքախոս մահմեդականների էթնիկ ինքնահաստատման առանցքը դարձավ աստիճանաբար ահագնացող հակահայկականությունը, մի բան որը չենք կարող ասել իրանական ադրբեջանցիների առումով։

Այսպիսով՝ անհիմն ու շինծու է Ադրբեջանի ղեկավարության կողմից արդեն մեկ հարյուրամյակ շահարկվող իրանական ադրբեջանցիների հետ էթնիկ նույնականացման և իբրև նույն ազգը «երկփեղկված» ներկայացնելու մասին համառորեն տարածվող քարոզչությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բայբուրդյան Վ. (2022),** Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան։
2. **Զոլյան Մ. (2007),** Ազգամիջյան քաղաքականությունը Խորհրդային Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղի խնդիրը //«21-րդ ԴԱՐ», թիվ 4 (18)։
3. **Խառատեան Հ. (2012**), «Ադրբեջանցիները», «կովկասալեզուները եւ իրանալեզուները». ինքնության զարգացումներն Ադրբեջանում // «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, Մխիթարյան տպ. ։
4. Հայոց պատմություն (2010), հ. 3, գիրք I, խմբ.՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ, Երևան։
5. **Մանասյան Ա.,** Ինչո՞ւ ադրբեջանական հանրապետության ցեղասպան վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում, էջ 22, http://ysu.am/files/02A_Manasyan-1545980753-.pdf (մուտք՝ 17.02.22)։

6.**Նահապետյան Հ.,** Քանի՞ տարեկան է ադրբեջանցի ժողովուրդը. Կրկին Ափշերոնյան մահմեդականների ինքնության շուրջ // «21-րդ դար», թիվ 6, 2014:
7.**Ռաշիդվաշ Վահիդ,** «"Atropatene Population"-ի մարդաբանական և գենետիկական բնութագիրը» // Հումանիտար և սոցիոլոգիական գիտությունների միջազգային հանդես, հ.5, թիվ 5, Երևան, 2012:
8.**Ռուբեն (2021),** Հայաստանը միջցամաքային ուղիների վրա, Երևան:
9.**Վարդանյան Թ.,** Ադրբեջանցիներ, ինքնության փնտրտուքը հետխորհրդային շրջանում// «21-րդ ԴԱՐ», թիվ 3(49), 2013:
10.**Վարդանյան Թ.,** Թաթարական ազգայնամոլության դրսևորումներն Անդրկովկասում 20-րդ դարի առաջին տասնամյակում, http://www.ysu.am/files/10T_Vardanyan.pdf (մուտք՝ 20.02.22):
11.**Асатрян Г. (2012),** Этническая композиция Ирана: От «Арийского простора» до Азербайджанского мифа, Ер..
12.**Асатрян Г. С. (1991),** Заметки об азари — исчезнувшем языке Азарбайджана, К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении. Составитель: П. М. Мурадян; Издательство Ереванского гос. университета.
13. **Алиев И. (1960),** История Мидии, Баку, АН АзССР.
14. **Бабаян Д.,** Формирование Азербайджанского народа: от татаризации до азербайджанизации, стр.1, http://noravank.am/upload/pdf/David_Babayan_form.pdf (մուտք՝ 03.03.22).
15.**Бартолд В. (1963),** Сочинения, т. 2, ч. 1.
16.**Васильев Л. (2013),** История Востока, М., https://studme.org/178104094196/istoriya/istoriya_vostoka (մուտք՝ 22.03.22).
17.**Галкина Е.,** Становление нации и пути национализма в Иране, Вестник Рязанского государственного университета им. С. А. Есенина, 2011, № 32. https://cyberleninka.ru/article/n/stanovlenie-natsii-i-puti-natsionalizma-v-irane (մուտք՝ 26.03.22)
18. **Гейбулаев Г. (1984),** К этногенезу азербайджанцев, Баку.
19.**Гейбулаев Г. (1986),** Топономия Азербайджана (историко-этнографическое исследование), Баку.
20.**Karim Majid (2020),** Caucasian Tats-Persian Speakers of the Eastern Transcaucasia, Yerevan State University.
21. История Азербайджана (1952), под. ред. Сумбатзаде А. С., Гулиева А. Н., Токаржевского Е. А., том 1, «С древнейших времен до присоединения Азербайджана к России», Издательство Академии наук Аз. ССР, Баку.
22. История Азербайджана (1979), под ред. Дж. Гулиева, Баку.
23.**Раванди-Фадаи Л. (2013),** Особенности национальной политики в Современном Иране., Вестник Российской нации, М., 1-2.
24.**Шнирельман (2003),** Войны памяти, Мифы, идентичность и политика в Закавказье, ИКЦ «Академкнига», Москва.
25.**Энаятолла Р. (2020),** Азербайджан и Арран: Атурпатакан и Кавказская Албания, Ер..
26. **Swietochowski (1985) T.,** Russian Azerbaijan, 1905-1920: The shaping of a national identity in a Muslim community, Cambridge University press.

REFERENCES

1. **Bayburdyan V. (2022),** Irani patmut‘yun (hnaguyn zh’amanaknjerits‘ minch‘ew mjer ōrjerě), JErewan:
2. **Zolyan M. (2007),** Azgamijyan k‘aghak‘akanut‘yuně KHorhrdayin Adrbjejanum ew Ljernayin Gharabaghi khndirě //«21-rd DAR», t‘iv 4 (18):
3. **Kharatjean H. (2012**), «Adrbjejants‘injerě», «kovkasaljezunjerě yw iranaljezunjerě». ink‘nut‘yan zargats‘umnjern Adrbjejanum // «Handēs amsōrjeay», Vijenna-JErywan, Mkhit‘aryan tp. :
4. Hayots‘ patmut‘yun (2010), h. 3, girk‘ I, khmb. ՝ A. Mjelk‘onyan ew urishnjer, JErewan:
5. **Manasyan A.,** Inch‘oՀw adrbjejanakan hanrapjetut‘yan ts‘jeghaspan vark‘ě artats‘olvats ch‘ē nra k‘aghak‘akan nkaragrum, ēj 22, http://ysu.am/files/02A_Manasyan-1545980753-.pdf (mutk‘՝ 17.02.22):
6. **Nahapjetyan H.,** K‘aniՀ tarjekan ē adrbjejants‘i zh’oghovurdě. Krkin Ap‘shjeronyan mahmjedakannjeri ink‘nut‘yan shurj // «21-rd dar», t‘iv 6, 2014:
7. **Rashidvash Vahid,** «“Atropatene Population”-i mardabanakan ew gjenjetikakan bnut‘agirě» // Humanitar ew sots‘iologiakan gitut‘yunnjeri mijazgayin handjes, h.5, t‘iv 5, JErewan, 2012:
8. **Rubjen (2021),** Hayastaně mijts‘amak‘ayin ughinjeri vra, JErewan:
9. **Vardanyan T‘.,** Adrbjejants‘injer, ink‘nut‘yan p‘ntrtuk‘ě hjetkhorhrdayin shrjanum// «21-rd DAR», t‘iv 3(49), 2013:
10. **Vardanyan T‘.,** T‘at‘arakan azgaynamolut‘yan drseworumnjern Andrkovkasum 20-rd dari arajin tasnamyakum, http://www.ysu.am/files/10T_Vardanyan.pdf (mutk‘՝ 20.02.22):
11. **Acatpjan G. (2012),** Etnichjeckaja kompozicija Ipana: Ot «Apiйckogo ppoctopa» do Azjepbaйdzhanckogo mifa, JEp..
12. **Acatpjan G. (1991),** Zamjetki ob azapi — icchjeznuvshjem jazykje Azapbaйdzhana, K ocvjesh’jeniju ppobljem ictopii i kul’tupy Kavkazckoй Albanii i voctochnyx ppovincій Apmjenii. Coctavitjel’: P. M. Mupadjan; Izdatjel’ctvo JEpjevanckogo goc. univjepcitjeta.
13. **Alijev I. (1960),** Ictopija Midii, Baku, AN AzCCP.
14. **Babajan D.,** Fopmipovanije Azjepbaйdzhanckogo napoda: ot tatapizacii do azjepbaйdzhanizacii, ctp.1, http://noravank.am/upload/pdf/David_Babayan_form.pdf (mutk‘՝ 03.03.22).
15. **Baptold V. (1963),** Cochinjenija, t. 2, ch. 1.
16. **Vacil’jev L. C. (2013),** Ictopija Voctoka, M., https://studme.org/178104094196/istoriya/istoriya_vostoka (mutk‘՝ 22.03.22).
17. **Galkina JE.,** Ctanovljenije nacii i puti nacionalizma v Ipanje, Vjectnik Pjazanckogo gocudapctvjennogo univjepcitjeta im. C. A. JEcjenina, 2011, № 32. https://cyberleninka.ru/article/n/stanovlenie-natsii-i-puti-natsionalizma-v-irane (mutk‘՝ 26.03.22)
18. **Gjeйbulajev G. (1984),** K etnogjenjezu azjepbaйdzhancjev, Baku.
19. **Gjeйbulajev G. (1986),** Toponomija Azjepbaйdzhana (ictopiko-etnogpafichjeckoje iccljedovanije), Baku.
20. **Karim Majid (2020),** Caucasian Tats-Persian Speakers of the Eastern Transcaucasia, Yerevan State University.
21. Ictopija Azjepbaйdzhana (1952), pod. pjed. Cumbatzadje A. C., Gulijeva A. N., Tokapzhjevckogo JE. A., tom 1, «C dpjevnjeйshix vpjemjen do ppicojedinjenija Azjepbaйdzhana k Poccii», Izdatjel’ctvo Akadjemii nauk Az. CCP, Baku.
22. Ictopija Azjepbaйdzhana (1979), pod pjed. Dzh. Gulijeva, Baku.

23. **Pavandi-Fadai L. (2013**), Ocobjennocti nacional'noй politiki v Covpjemjennom Ipanje., Vjectnik Россійской nacii, M., 1-2.
24. **SHnipjel'man (2003),** Voйny pamjati, Mify, idjentichnoct' i politika v Zakavkaz'je, IKC «Akadjemkniga», Mockva.
25. **Enajatolla P. (2020),** Azjepbaйdzhan i Appan: Atuppatakan i Kavkazckaja Albanija, JEp..
26. **Swietochowski (1985) T.,** Russian Azerbaijan, 1905-1920: The shaping of a national identity in a Muslim community, Cambridge University press.

Ներկայացվել է՝ 30.06.2022 Received 30.06.2022 Получено: 30.06.2022
Գրախոսվել է՝ 07.07.2022 Reviewed 07.07.2022 Рассмотрено: 07.07.2022
Ընդունվել է՝ 25.08.2022 Accepted 25.08.2022 Принято: 25.08.2022

E-mail: eduardzohrabyan@ysu.am